ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

17.03.23 № 09/14.2/5800-23
Ձեր N

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԺՇԿՈՒՀԻ ԼՈՒՍՅԱ ԴԻԼՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԿՈՂԲԻ ԲԱ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՍԱՆԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
koghbiambulatoria@mail.ru

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան Ձեր 2023 թվականի մարտի 6-ի թիվ 12 գրությանը, հայտնում եմ հետևյալը.

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի՝ Առողջապահության նախարարության լիցենզավորման գործակալության կողմից վարվող լիցենզիաների գրանցամատյանում պահպանվող տեղեկատվության՝ «ՀՀ Տավուշի մարզի բժշկուհի Լուսյա Դիլոյանի անվան Կողբի ԲԱ» ՀՈԱԿ-ին, Տավուշի մարզ,գ. Կողբ հասցեում, Առողջապահության նախարարի 2003 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 1133-Ա հրամանով տրվել է բժշկական օգնություն և սպասարկում (Ընտանեկան բժշկություն, իմունոկանխարգելիչ, բժշկական ընդհանուր պրակտիկա, մանկաբուժական ընդհանուր պրակտիկա, մանկաբարձական ընդհանուր պրակտիկա) տեսակներով թիվ Կ-XX-000344 անժամկետ լիցենզիա, կարգավիճակը՝ գործող:

Ըստ Ձեր կողմից ներկայացված տեղեկատվության, ամբուլատորիայում աշխատում է 2 ընտանեկան բժիշկ, որոնց վերաբերելի է ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշմամբ հաստատված հավելված 12-ի 4-րդ գլխի՝ ընտանեկան ավագ բուժաշխատողի գրասենյակների համար սահմանված դրույթները, ըստ որի մեկ ընտանեկան ավագ բուժաշխատողը, որն ունի ավագ բուժաշխատողի մասնագիտացում ու որակավորում, աշխատում է մեկ ընտանեկան բուժքրոջ հետ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի թիվ 420-Ն որոշման հավելված 2-ի, ընտանեկան բժշկի կողմից սպասարկվող երեխաների օպտիմալ թիվը կազմում է 500, մինչդեռ «ՀՀ Տավուշի մարզի բժշկուհի Լուսյա Դիլոյանի անվան Կողբի ԲԱ» ՀՈԱԿ-ում մեկ ընտանեկան բժշկի կողմից սպասարկվող երեխաների թիվը 350 է:

Հաշվի առնելով վերոհիշյալը, բացի 2 ընտանեկան բուժքրոջ հաստիքից ևս մեկ՝ մանկական բուժքրոջ հաստիքի առկայությունը հիմնավորված չէ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆ

16.03.2023

X

ՌՈՒԲԵՆԻ ՎԱՐԴԱՆՈՒՇ

Signed by: GRIGORYAN VARDANUSH 6802780100

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
СЕКРЕТАРИАТ

Կատ.՝ Լ.Ավետիսյան
մոր և մանկան առողջության պահպանման վարչություն,
հեռ. 060-80-80-03-1305